ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022 թ. **N ----- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 42-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ի մասի 14-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ 25.000.000 (քսանհինգ միլիոն) դրամով ավելացնելու նպատակով լրացուցիչ 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի (յուրաքանչյուրը՝ 100 դրամ անվանական արժեքով) տեղաբաշխման արդյունքները:
2. «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 43.305.300 (քառասուներեք միլիոն երեք հարյուր հինգ հազար երեք հարյուր) դրամ, որը կազմում է 433.053 (չորս հարյուր երեսուներեք հազար հիսուներեք) հատ 100 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:
3. Հաստատել «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված

Կազմված է ----------2022թ.
և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Հայաստանի Հանրապետության
Երևան քաղաքի ավագանու
« » 2022թ.
N -Ա որոշմամբ

ՀՀ Երևանի քաղաքապետ՝

_____ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 26.12.1994 թ.,
գրանցման N286.140.00676

վկայական N03 Ա 063676

հվհհ 02500241

30.03.2010թ. գրանցված կանոնադրության
թիվ ____.___ փոփոխությունը գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

աշխատակից_____

“____”_____ 2022 թ.

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ Ա Ն

(փոփոխություն)

2022թ.

Ընկերության կանոնադրության 4.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 43.305.300 (քառասուներեք միլիոն երեք հարյուր հինգ հազար երեք հարյուր) դրամ, որը կազմում է 433.053 (չորս հարյուր երեսուներեք հազար հիսուներեք) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 100 (մեկ հարյուր) դրամ:

Բոլոր 433.053 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության՝ 30.03.2010թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով՝ Երևանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատում է Երևանի ավագանին:

Երևանի քաղաքապետի՝ 13.04.2022թ. հ.1421-Ա որոշմամբ հայտարարվել է կանոնադրական կապիտալի ավելացման և լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին՝ սահմանելով լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները:

Երևանի բյուջեից 2022թ. «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին հատկացվել է 25.0 մլն.դրամ՝ որպես կանոնադրական կապիտալի ներդրում: Հատկացված գումարի չափով սույն նախագծով առաջարկվել է ներդրման ձևակերպումը: Կանոնադրական կապիտալի ավելացումը բխում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 42-րդ հոդվածի պահանջներից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**